533

Շարք Օ

Գալիս.

83 ս
Շ-72

թ. 1891

№ 29 Հրատարակութիւն „Աղբիւր“ եւ „Տարազ“ հանդէսների № 29

3-93
Շ-72

N 2349

Օ. ՇՄԻԴԹ

ԳԱԼԻԱ

2004

Թարգմ. Ս. ՀԱԽՈՒՄՅԱՆ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ“ Ջ. ԾԱՌՈՒԿՅԱՆԻ
Գոլոֆին պող. եւ բաղնատուն. փող., տան մէջ:
1891

ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

№		Ռ. Կ.
1.	„Աղբիւր“ 84 թ. — — —	3 —
2.	„ 87 թ. — — —	3 —
3.	„ 83 թ. — — —	10 —
4.	„ 85 թ. — — —	10 —
5.	„ 86 թ. — — —	10 —
6.	„ 88 թ. — — —	4 —
7.	„ 89 թ. — — —	3 —
8.	„ 90 թ. — — —	3 —
9.	Տարազ 90 թ. — — —	3 —
10.	Փայտաշէն խրճթից սպիտակ տոռնը. պատկերազարդ — — — —	— 60
11.	Հայոց մրջիւն, պատ. — — —	— 40
12.	Ժան Բատ. Լիւդիի մանկ. — —	— 10
13.	Ոսկէ ձկնիկ, Գոռշկին — — —	— 30
14.	„ II սերիա — — —	— 5
15.	Մշակուած եւ ամշակուածի կեանքը —	— 30
16	Զար. Արտի արկած. — — —	— 50
17	Փրիտեօֆ դիւց. (պատկ.) — —	— 40
18.	Քնար խօսնակ — — — —	— 50
19.	Պօղնանի ուսուցչի օրագ.. — —	— 20
20.	Ալ. Թոդի. Երկու մանրամէջ — —	— 15
21.	Անդերսէն, Սոխակ եւ Խոզարած —	— 15
22.	Դիկենս, Հարս եւ սկեռ. — —	— 15
23.	Ղարեգին-Կրն. պրնբրիեշակը — —	— 25
24.	Երեխաները եւ նրանց բարեկամները	— 40
25.	Ղ. Արայեան, Արեգնազան — —	— 40
26.	Տորք Անգէղ եւ Հայկանոյշ գեղեցիկ	— 40
27.	Տիգօ, Ղաշի աղախնիներան — —	1 —
28.	Ա. Մ. Ն Պ. ճաշակ (ընտիր բանաստ.)	— 25
29.	Ն. Տ. Աւետիքեան, Տեղագրական նամականեր	30
30.	Օրացոյց մեծադիր պատկերազարդ 90 թուի	30
31.	Փոքրադիր— — — — —	— 15
32.	Փ. Վարդ., Արեւելեան վիպաշխարհ—	— 20
33.	Բասկական Լեգենդա — — —	— 20
34.	Ե. Ղազարեան՝ Գիւղ — — —	— 15

№ 2599.

№ 29 Հրատարակութիւն „Աղբիւր“ եւ „Տարազ“ հանդէսների № 29

Օ. ՇՄԻԴԹ

83-93
Շ-72

8801

ԳԱԼԻԱ

Թարգմ. Ս. ՀԱԽՈՒՄԵԱՆ

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ“ Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ

Գօրգիև. պր. եւ Բարեատիկ. փող. անկիւն:

1890

6028

Дозволено цензурою, Тифлисъ, 1890 г. 25-го ноября.
Тип. „Арор“ Т. Я. Назарянъ, уг. Головин. пр. и Барят. ул.

ԳԱԼԻՍ

I.

Իշխան Բոսլաւը մեծ խնջոյք էր սարքել. նա քէֆ էր անում իր զինակիցների հետ։ Աշնանային գիշերուան անթափանցելի խաւարի մէջ վալում էին նրա հոյակապ պալատի պատուհանները, որոնց միջով ցոլացող լոյսի ճառագայթները թափանցում էր խաւարի մէջ. ամբողջ պալատի ներսը, ճաւաքած էր լոյսով։ Բաղ կարիճների բարձրաձայն երգերը, արծաթեայ բաժակների զրնգոցն ու աղմուկը լսւում էր պալատից ու տարածւում ամեն կողմ . . . Իշխան Բոսլաւը քէֆ էր անում իր կարիճների հետ։ Կէս գիշերից անց էր արդէն, բայց խոհարարները ու ծառաները դեռ էլի վազվզում էին ու պատրաստութիւններ տեսնում. հիւրերը շարունակում են իրանց քէֆը և չեն էլ մտածում տուն գնալու վրայ. նրանք երգում են, իրար մօտ պարծենում են. ամեն մինն իր գլուխն է գովում. մէկը պարծենում էր թէ ինքը գնտակով կբնոիկ ամենափոքր ծակն թռչելու ժամանակ։

—Իսկ ես չիու կատաղի արշաւի ժամանակ նետերը կարձակեմ, ասում էր միւսը։

—Ինձ համար ոչինչ բան է մենակ գնալ արջի դէմ, ա-

սում էր երբորդը.—վայրկ եզի սրոգերից կրբռնեմ ու նրան կը-կանգնեցնեմ։

—Տղան նա է, որ մէկ խփելով վարագին բարձրացնի նիզակի ծայրը, որտուում էր մի ուրիշը։

—Դրանք ոչինչ, բարեկամներս, այդ զարմանալի չէ, ինչ որ դուք էք պատմում, ասաց Բոսլաւը. ապա էլ ինչ կտրիճ-ներ ենք, որ չրկարողանանք նետ ձգել ու գազաններին յաղ-թել. բայց դուք տեսել էք իմ աղջկան, գիտէք ինչեր է անում իմ սիրելի փոքրիկ երեխան։—Նա ոչ մի դիւցազնից յետ չի մնալ նետ ձգելում. նաւակը թիավարում է ինչպէս մեծ մարդ. վա-զելիս ամենքի առաջը կտրում է, ամենաբարձր ծառի ծայրն է, բարձրանում և ինչ ձի բերես առանց թամքելու՝ կընստի կրքշի...

—Մի թէ . . . բղաւեցին հիւրերը. էլ ինչու ես սպասում, ինչու չես այդ հրաշքը մեզ ցոյց տալիս։ Զւարճացրու հիւրերիդ, կանչիր նրան, թող երգէ ու պար գայ . . .

—Լաւ բան չէ, բարեկամներս, երեխան հիմա քնած է. լաւ չէ նրա քունը կտրել. ուրիշ անգամ . . .

—Ուրիշ անգամ ուշ կըլինի—աղաղակեցին հիւրերը—թող յետոյ քնի. բեր այստեղ նրան տեսնենք, զւարճացրու մեզ, սրտներս շահիր . . .

Բոսլաւն ուզեց մի կերպ ազատուել, սեղանից վեր կացաւ, բայց հիւրերը շրջապատեցին նրան։

—Փչում ես հա. ինչպէս երևում է հէնց մեծ-մեծ խօսել գիտես, ասացին հիւրերը իշխանին գրգռելով։ Իշխանը վիրաւորուեց։

—Թող ձեր ուզածը լինի, ասաց նա, կըգնամ, կըզար-թեցնեմ, կըբերեմ։

Հիւրերը հանդարտեցին և սպասում էին։

II.

Ասպարանքի միւս ծայրում կար մի նեղ, դիք սանդուղք, որ տանում էր դէպի փոքրիկ ննջարանը. այդտեղ մետաքսէ վերմակի տակ ինչպէս թռչնակն իր բնի մէջ հանգիստ քնած էր սևաչեայ Գալիան իր դայեակ Օքսանայի հետ։

Հանդարտ քայլերով Բոսլաւը մտաւ ննջարան. մօտե-ցաւ անկողնի վարագոյրին, զգուշութեամբ բարձրացրեց և մի բոպէաչափ զմայլւած նայեց քնած երեխային։

—Սիրտս չէ տալիս զարթեցնեմ,—մրմնջաց նա ինքնիրան և մի քիչ կռացաւ ու ձեռքով շոյեց երեխայի մետաքսանման գանգուր մազերը։

—Գալիա, Գալիա . . .

Աղջիկը կիսով չափ բացեց աչքերը և թևերով գրկեց հօր գլուխը։

—Հայրիկ, հայրիկ, ինչ երազ եմ տեսել, որ իմանաս։

—Վերկաց, Գալիա, գնանք հիւրերի մօտ, քեզ կամե-նում են տեսնել . . .

Աղջիկը կռթնեց արմունկի վրայ և աչքերը լայն բաց արաւ։

—Ո՞ւր գնանք, ինչ հիւրերի մօտ . . . չեմ ուզում ես հիւրերին . . .

—Ցիմար հօ չէս, քեզ իմ քաջերս ուզում են տեսնել, որ նրանց համար երգես, պարես ու զւարճացնես նրանց, վեր կաց շուտով։

—Չեմ ուզում հիւրերին, չեմ գնում, քունս տանում է։

—Այդպէս չէ կարելի, աղջիկս, ես նրանց խօսք եմ տուել, թէ քեզ կըտանեմ։

Բայց Գալիան ամենևին չըգիտէր թէ ինչ ասել է «չէ կարելի»։

—Չեմ գալ, չեմ ուզում, քունս տանում է,—կրկնեց նա հրելով հօր ձեռքը։ Բօսլաւը լուրջ կերպարանք ընդունեց։

—Տես, աղջիկս, շատ լաւ, ես քեզ զօրով չեմ տանում, բայց երբ դու իմ խաթրը կոտրում ես, անարժան ես իմ սիրուս։

Աղջիկը տեղից վեր թռաւ։

—Հայրիկ, հայրիկ ջան, պարը էլ կըգամ, կերգեմ էլ, ինչ որ ուզում ես կանեմ, միայն ինձ վրայ այդպէս մի նայիր... Ա՛յ, այս ըսպէին հագնիմ, բարի հայրիկս . . . Ա՛յ, նայիր ինձ, դէ համբուրիր ինձ.—այսպէս հօր հետ կատակ անելով Գալիան ցատկեց թախտի վրայ ու բարձրացաւ հօր ուսերին նստեց. էլ նա ինչպէս կարող էր յօնքերը կիտել։ Բօսլաւը, որի առաջ զոզում էին սարուկներն ու զինուորները, Բօսլաւը, որից վախենում էին թշնամիները, ինչպէս կրակից, մի ըսպէում զսպեց իր բարկութիւնը, իր հզօր ձեռքերով գրկեց իր Թանգագին գանձը և բերաւ խնջոյքի դահլիճը։ Բնաբ ածողը զարկեց քնարի թելերին, Գալիան իր երկար մետաքսէ շապկի կիսաբաց թևերը ճարպիկութեամբ յետ ձգեց ուսերի վրայ, ուղղեց թևերի ոսկի ապարանջանները, թախտ տուաւ գանգուր մազերը, ձեռքերը դրաւ կողքերին և սիգաձեմ չափաւոր քայլերով սկսեց պտտել դահլիճում, ինչպէս մի սպիտակ կարապ։

—Կեցցես, Գալիա, կեցցես, կեցցե՛ս դու,—գոչեցին կրտրիճները, երբ Գալիան բոլորովին կարմրած կանգնեց պարի կիսում, արագ վազեց ընկաւ հօր գիրկը, ամաչելով թագնուեց

հօր Թանգագին կարմիր մահուդի վերարկուի լայն ծալքերի մէջ և այնտեղից չարաճճիկ աչքերով նայում էր, որ տեսնէ թէ իր պարը դուր եկաւ հիւրերին, թէ ոչ։

—Ասա, Գալիա ջան, Թագնուիլն ինչ է, ասաց հայրը,—վե՛ր աւ աղեղն ու մի նետ ձգիր։

Աղջիկը ճարպիկութիւնով քաշեց լարը, նշան առաւ պատի վրայ կախուած եղջերուի գլխի աչքին ու արձակեց նետը. . . Նետը խրուեց եղջերուի աչքի ու փոսի մէջ։

—Ա՛յ կեցցես, Գալիա. ինչ զարմանալի ճարպիկութիւն, լսուեց ամեն կողմից։

—Երեխես շատ երես կըտաք, ասաց Բօսլաւը ժպտալով.—քնելու ժամանակ է, Գալիա. դուք էլ, իմ կարիճներ, աւել պատկաը Ներեցէք երեխային։

Գալիան խոնարհ գլուխ տուաւ կարիճներին ու շրջուած նրանց անընդհատ գովասանքից, ամօթից շառագունած, ինչպէս վարդ, վազեց դէպի իր ննջարանը։

III.

Հեռուներում առաւօտ Գալիան սովորականից ուշ վեր կացաւ անկողնից և դուրս եկաւ պատշգամբ։ Նրա դայեակ պառաւ Օքսանան գնացել էր ջրհորից թարմ ջուր բերելու, իսկ աղախինները ամեն մէկը մի կողմն էին ցրուել, գնացել։ Աղջիկը մենակ կանգնած էր և թոյլ թոյլ յօրանջում էր ու ձանձրանում։

—Ինչու դայեակս այսպէս ուշացաւ,—մտածում էր նա.

—անտառ չըգնամ արդեօք, երևի առաւօտից շատ սունկ կըլինի այնտեղ . . .

Այսպէս մտածելով արագութեամբ ցած վազեց պատըշգամբից և անհետացաւ անտառում։ Ինչպէս զով է, ինչպէս կանաչ է չորս կողմը, քանի՜ տեսակ մժեղներ կան։ Գալիան արագ ցատկում էր մի թումբից միւսը. ոտնամանները նրան խանգարում էին, հանեց ոտնամանները ու կոխեց գօտին և սկսեց ուրախ երգել։ Այստեղ մի սունկ էր գտնում, այնտեղ մի պտղահատիկ պոկում. ազատութիւն է։ Ահա և առուակից այն կողմ խսկական անտառը. ինչպէս մութն է այնտեղ, թաւ է, երկիւղալի է։ Ցեսնես ինչ կայ այնտեղ. գնա՞լ, տեսնե՞լ. բայց դայեակը հրամայել է այն կողմը չըգնալ, այնտեղ գազաններ կան, ասում է, ոլոր մոլոր Ճանապարհներում կարելի է կորչել... հիւրըներ կան այնտեղ . . . Բայց ինչպէս լաւ կըլինէր տեսնել։ Գալիան կանգ առաւ առուակի առաջ, մտքի մէջ տատանուելով. բռնել էր ընկուզենու Ճիւղն ու աչքի տակից նայում էր մութ թաւ անտառին։

—Դայեակը արգելել է, հրամայել է չըգնալ,—կրկնում էր նա մտքի մէջ ընկղմած, բայց յետոյ յանկարծ վՃռեց,—գնալու եմ, ինչ կուզէ թող լինի,—ասաց ու արագութեամբ թռաւ առուակի վրայից։

—Իմանալու է պատուաը—մտածում էր Գալիան—էհ, դատարկ բան է, թող մի ժամ ինձ վնասէ. ինչ կայ, ես այս ոտքերս յետ կըդառնամ, հէնց այստեղ, մի քիչ անցնեմ նայեմ, տեսնեմ ինչ կայ այն կածանի ետև։

Գալիային գեղեցիկ երևաց մութ անտառը. մեծ, հաստ ծառերը, որ երկու մարդ չեն կարող գրկել, փափուկ ու գալարը

մամուռ, այնպիսի խիտ թփերը, որոնց միջից դժուար է անցնել. բայց ինչ լաւ է թփերի միջը պատռելով անցնելը . . .

—Այ, այս թոպէին կըվերադառնամ—մտածում էր աղջիկը—հէնց միայն նայեմ թէ միւս կողմն ինչ կայ։ Բայց միւս կողմն էլի միևնոյնն էր, էլի հարիւրամեայ ծառեր, էլի կանաչ փափուկ մամուռ . . .

—Բաւական է, ուշ գնալու ժամանակ է, մտածեց Գալիան և յետ դարձաւ։ Երկար ժամանակ նա թափառեց աջ ու ձախ։ ուղիղ էլ, ծուռ էլ գնաց, բայց առուակը չըկար ու չըկար։ Գնում է, գնում, ոտները մինչև անգամ թուլացել են, բայց էլի շարունակ անտառումն է. կածանն էլ է կորել, մարգագետինները էլ։

„Մոլորուել եմ„, մտածեց Գալիան ու նստեց։

Նա չըվախեցաւ, բայց այնպէս, մի տեսակ դարձաւ։

Ո՞ւր գնալ, քաղցած էլ է, շատ էլ ժամանակ է անցել։

—Ով գիտէ ոտնն խմացել են. հայրիկը ուրիշ տեղ է գնացել, թէ չէ նա ինձ շատ շուտով կըգտնէր։ Դայեակս երևի լաց է լինում . . .

Գալիան կրկին սկսեց թափառել առաջ ու յետ, բայց էլի անտառ . . .

—Յանկարծ ծառի ետևից մի արջ դուրս գայ, կամ վայրի եզ, կամ վարազ,—անցնում էր Գալիայի մտքով. նա չորս կողմը նայեց, բայց անտառը խաղաղ էր, միայն տերևներն էին շըշշում և մժեղները վժվժում մամուռի մէջ։

—Ո՛չ, գազանները այժմ գնացած կըլինին անտառի խորքը, այ, ձմեռը ուրիշ բան է . . .

Գալիան կրկին սկսեց գնալ և այս անգամ դուրս եկաւ մի

ընդարձակ մարգագետին։ Այդտեղ, ծառի տակ նստած էր մի աղջիկ, որ տասը տարեկան կը լինէր, նա գունաթափ էր ու կապոյտ աչքերով։ Աղջիկը իր ցրած խիտ մազերը ծամ էր անում, նրա ծնկների վրայ ընկած էր մի պատկ հիւսած անտառի ծաղիկներից ու խոտերից։

—Հիւրի է—մտածեց Գալիան ու երկիւղից մնաց կանգնած։ Բայց Գունաթափ աղջիկն էլ Գալիայից պակաս չըվախեցաւ. նա վայր ձգեց պատկը, տեղից վեր թռաւ ու սկսեց վազել։ Գալիայի երկիւղն խիստ անցաւ։

—Այս ինչ „հիւրի„ է որ ինձանից վախչում է, մտածեց նա, ինքն էլ վազեց նրա ետևից ու գոռաց.

—Այ աղջիկ, աղջիկ, ուր ես վազում, սպասիր։

Աղջիկը կանգնեց։

—Ես մոլորուել եմ, ցոյց տուր ինձ Ճանապարհը, խոսեց կրկին Գալիան։

—Ինչպէս թէ մոլորուել ես, մի՞թէ Ճանապարհը չես Ճանաչում, հարցրեց աղջիկը։

—Ես ամենևին չեմ եղել այս անտառում, դայեակս ինձ արգելում է այստեղ գալ. իսկ այսօր սիրտս այսպէս ուզեց, այնպէս որ . . . եկայ . . .

Աղջիկը աչքի տակով ծուռ ծուռ նայեց Գալիայի վրայ։

—Սիրտդ ուզի՞ց. մի՞թէ դու չես սիրում դայեակիդ, չի՞ որ նա այժմ քեզ փնտրում է . . . Գալիան բոլորովին ամաչեց, նա գլուխը խոնարհեցրեց ու լռեց։

Տասը րոպէից յետոյ նրանք հասան մի ուրիշ մարգագետնի, որի վրայ շինուած էր մի խրճիթ ծառի ոստերից և մամուռից։

—Մի՞թէ այստեղ էք բնակուում, զարմանքով հարցրեց Գալիան։

—Այո։

Ներս մտան։ Նրանց դիմաւորեց մի բարձրահասակ սպիտակ մազերով ու երկար մօրուքով ծերունի։

—Հայրիկ, այս աղջիկը մոլորուել է Ճանապարհից, ես էլ այստեղ բերի, ծերունին անտղեց նոր հիւրին։

—Դու ո՞րտեղից ես, որդեակ, քնքշաբար հարցրեց նա։

—Պալատից, պատասխանեց Գալիան։

—Ծնողքներդ ո՞վ են։

—Իմ հայրս Բօսլաւն է, նա իշխան է, ամենքը նրան Ճանաչում են . . .

Ծերունին լռեց։

—Ապա այս ինչպէս եղաւ, որ դու ընկար մեզ մօտ անտառը։

Գալիան պատմեց։

—Է՞, որդի, ինչպէս երևում է դու գիշերս մեզ մօտ կըմընաս, վոնթորիկ է լինելու։ Ուտել չի՞ս ուզում։ Աննա, դրան մի բան տուր ուտելու։

Փոքրիկ տանտիրուհին բերաւ մեղր, մի կտոր հաց և ջուր։ Գալիան սկսեց ուտել։ Փոնթորիկն անտառին չըհասաւ, ծերունին անից դուրս եկաւ Գալիային Ճանապարհ ձգելու։

Աննան էլ նրանց հետ դուրս եկաւ։

—Գիտե՞ս ինչ կայ, որդեակ, ասաց ծերունին Գալիային, դու մեզ մօտ ես ընկել անսպասելի կերպով, բայց մեր մասին ոչ ոքի ոչինչ չասես, թէ չէ մեզ ոտով ձեռով կրկորցնես։

Գալիան սարսափեց։

—Լաւ, պապի, ինչու՞ ես դու մարդկանցից վախենում. դու կախարդ ես, վհուկ ես։

—Ո՛չ, որդի, ես քրիստոնեայ եմ, պատասխանեց նա դառն ժպիտով. եթէ մէկն իմանայ իմ տեղը, ինձ կրսկսեն հալածել ինչպէս վայրենի գազանի։

—Քրիստոնեայ . . .—մտածմունքի մէջ ընկած կրկնում էր Գալիան,—ուրեմն դու յոյն ես։

—Ո՛չ, ես այստեղացի եմ, բայց Յունաստանում եղել եմ և յունարէն հասկանում եմ։

—Ապա ինչու՞ ես ասում քրիստոնեայ. պատմիր, պապի այդ ի՞նչ է նշանակում։

—Երկար կըլինի, որդեակ, դու չես էլ հասկանալ։

—Կըհասկանամ, պապի, բոլորը կըհասկանամ . . .

—Բո տուն գնալու ժամանակն է։ Այնտեղ քեզ սպասում են...

Բայց Գալիայի աչքերը վայլում էին. այստեղ մի բան կար, որ ինքը չգիտէր և նա ցանկանում էր ամեն բան իմանալ, ամեն բան հասկանալ։

—Պապի, այ պապի . . .

—Ի՞նչ է, որդի ջան։

—Թոյլ տուր որ կրկին քեզ մօտ գամ. հը՞, թոյլ կըտա՞ս. ես այժմ լաւ կըգտնեմ Ճանապարհը ու միտս կըպահեմ . . .

Ծերունին վախեցաւ։

—Ի՞նչ ես ասում, դու ինչու՞ համար պէտք է գաս այստեղերը։ Մեր գլխին դժբախտութիւն կըբերես . . .

—Ո՛չ, պապի, ես կամաց, ծածուկ կըգամ, ես ոչ ոքի, ոչ ոքի չեմ ասիլ . . . Այն ժամանակ դու ինձ կըսպասես, հա՞, պապի։

Ծերունին ոչինչ չըպատասխանեց, նա միայն արագացրեց իր քայլերը, յոյս ունենալով որ Գալիան միւս անգամ մոռացած կը լինի Ճանապարհը։

—Ահա, այս էլ քո առաւակը. այժմ դու տանն ես, մնաս բարով, ասաց Ծերունին, և շտապով հեռացաւ դէպի անտառի խորքը Աննայի հետ։

Տանը Գալիային փնտրում էին, վազվզում էին ու գոռգոռում։ Նա ասաց որ անտառում մոլորուել էր, բայց Ծերունու և նրա աղջկայ մասին մի խօսք էլ չասաց։

IV

Անցաւ մի օր։ Գալիան չէ կարողանում նստել սենեակում, աղջիկների հետ խաղալու ցանկութիւն չունի. նրան չեն ուրախացնում ոչ սիրուն ապաւնիները, ոչ սրաթև բազէն, ոչ կատուն իր ծագուկներով. մի բան նրան քաշում է դէպի անտառ, քրիստոնեաների մօտ, բարեսիրտ, հանդարտ Աննայի ու Ծերունու մօտ . . .

Օրը տաք էր։ Յուրտ քամին դադարել էր, որի մէջզգալի էր սեպտեմբեր ամսեան ուշացած ամառը։

Գալիան վերկացաւ դեռ լոյսը չըբացուած և վճռեց որ անպատճառ գնայ անտառ։ Կէսօրին մօտ Օքսանան ննջեց։ Գալիան իր սարկուհիներին ուղարկեց մէկին պտղահատիկների ետևից, միւսին սունկի, երրորդին ձուկ որսալու կամ հէնց այնպէս, մանգալու։ Աղջիկները ուրախ-ուրախ վազեցին ամեն մէկը մի կողմ, բայց ամենից աւելի ուրախ էր Գալիան։ Նա ազատ

շունչ քաշեց և գնաց տան ետևի գաւիթը, որտեղ գտնուում էին գոմերն ու ախոռները։

—Ը՞յ Դայլմա, էհէ՛, կանչեց նա։

Ախոռի ետևից երևաց մի թխադոյն աղջիկ յոնքերը կիտած։

—Ատա հօրդ որ ինձ համար թամքէ „Ուրուրին“. շուտ, այս բռնէիս։

Դայլման անհետացաւ ախոռումն։

Դուրս եկաւ խոժոռադէմ սարսուկ Խալին, Դայլմայի հայրը։ Նա աչքի տակից նայեց Գալիային և ծոյլ ծոյլ գնաց ձին բերելու։

Գալիան չէր կարողանում համբերել, ժամանակը նրան շատ երկար էր թուում, մէկ երկու անգամ անհամբերութեամբ ոտը գետին խփեց և այնպէս խլեց մտրակը Դայլմայի ձեռից, որ նա երկիւղից դէպի յետ ցատկեց, վերջապէս չհամբերեց Գալիան և Դայլմային ուղարկեց որ հօրը շտապեցնէ։

Ահա „Ուրուրն“ արդէն թամքած է։ Գալիան ցատկեց նստեց գորգից կտրած թամքի վրայ, ձիու սանձը թափ տուաւ ու ձին քշելով ասաց Դայլմային։

—Ները դայեակս զարթնի, ասա որ ես մեռ գալու գնացի, երեք ժամից յետոյ կվերադառնամ։

Գալիան քշեց իր ձին լայն ճապաղարշով մինչև երկու վերստ։ Ցանկարծ ձիու գլուխը ծռեց և սկսեց քշել դաշտերի ու մարգագետինների միջով դէպի անտառ։ Ահա և փոքր անտառը, ահա և առուն. ձին հեշտութիւնով ցատկեց նրա վրայից և մի վայրկեանից յետոյ Գալիան գտնուում էր ան-

տառի թառում։ Այստեղ նա իջաւ ձիուց, նրա սանձը փաթաթեց ծառին և ինքը գնաց կածանով։

Մեծ ուշադրութեամբ նա հետևում էր իր ասած նշաններին, առաջ էր գնում հանդարտ և զգոյշ, որ չըմոլորուի . . . Վերջապէս հասաւ մարգագետնին, որտեղ գտնուում էր խրճիթը։ Դուռը ծեծեց։ Դուռը բացաւ Աննան. խրճիթի մէջ ուրիշ ոչ օք չկար։

—Հայրդ ո՞ւր է, հարցրեց Գալիան։

—Ձուկ որսալու է գնացել, երեկոյեան դէմ միայն կվերադառնայ . . . Աննան զարմացած նայում էր Գալիայի վրայ և երևում էր որ ուրախ էր նրա գալուն։

—Մեղր կուտա՞ս, հարցրեց նա։—Մեղր բերաւ, նստեցին մեղրահացերի կոգին և սկսեցին գրոյցը։

—Ի՞նչպէս էք դուք ապրում այսպէս, մարդկանցից հեռու։

—Ինչ, ի՞նչ կայ օր։

—Մի՞թէ քո ժամանակդ տխուր չէ անցնում։

—Տխո՞ւր. ինչպէս թէ տխուր։

—Այ, որ միշտ մենակ ես լինում հօրդ հետ։

—Բայց ես բան եմ շինում . . .

—Ի՞նչ ես շինում։

—Ինչ եմ շինում։ Բանում եմ, սովորում եմ, խաղում եմ...

—Բանդ ի՞նչ է։

—Այ թէ ինչ. խրճիթը կարգի եմ բերում, լացք եմ անում, մեղուները հաւաքելու եմ գնում, որ հայրս քաղաք ծախելու է տանում, հօրս և իմ շորերը կարում, կարկատում եմ։

—Այդ բոլորը դու մեն մենակ ես անում։

—Բոլորը, վրաբերեց Աննան։

—Հա. ասացիր որ սովորում էլ ես։ Այդ ինչ բան է։

—Այ, կարդում եմ, գրում եմ, հաշիւ եմ սովորում . . .

—Կարդա՞լ, գրե՞լ, դու, քո աղջիկ տեղովդ։ Իսկի իմ հայրս էլ կարդալ գրել չի իմանում։

—Իսկ իմ հայրը յունարէն էլ գիտէ և լենճ էլ է սովորեցնում։ Մենք միասին ամեն երեկոյ կարդում ենք Սուրբ Գիրքը։

Գալիան քանի գնում աւելի էր զարմանում։

—Այդ ինչ բան է։

—Ախ, Գալիա, եթէ իմանաս, թէ ինչ լաւ բան է այդ՝ բոլորը Աստծու մասին է գրած, և այնքան, այնքան լաւ է գրած ...

—Աստծու մասի՞ն, ի՞նչ Աստծու։

—Մեր Աստծու, որ այնտեղ է, վերև երկնքում, այս ասելով Աննան մատը բարձրացրեց դէպի վերև։—Ձեր աստուածները կուռքեր են, աստուածներ հո չեն. նրանք փայտից շինած տիկնիկներ են, նրանք ոչինչ չեն կարող անել, իսկ մեր Աստուածն ամեն բան կարող է, ամեն բան . . . —Աննայի երեսը այրւում էր և աչքերը փայլում էին։

—Ի՞նչ, ինչ ասեցիր, կուռքերն աստուածներ չի՞ն. դու ասում ես, որ կուռքերն աստուածներ չի՞ն, ուրեմն Պէրունն էլ Աստուած չի՞. Վէլէսն էլ չէ աստուած . . . Ո՞վ ասաց քեզ։

—Ինձ հայրս է ասել, բայց առանց նրան ասելու այդ բանը գրքերումն էլ է գրած և . . . բայց . . . դէ ճշմարիտ է, ես հաւատում եմ . . . ճշմարիտ է.—կմկմաց Աննան։

Գալիան այժ էր անում որ մի բան մտածի, երևում էր, որ նա մի բան ուզում էր հասկանայ, լռեց, լռեց և վերջապէս հեծկլտաց, սկսեց արտասուք թափել։

—Ոչ, սուտ է, սուտ է, չեմ ուզում, ես չեմ ուզում ձեր Աստծուն, դու լենճ գլխից հանում ես, չեմ ուզում, չեմ ուզում...

Նա վեր ցատկեց տեղից, դէն ձգեց մեղրահացը, դուրս թռաւ խրճիթից և վազեց դէպի տան կողմը։ Աննայի բերանը բաց էր մնացել, նա մտածմունքի մէջ ընկած երկար ժամանակ կանգնած էր տան շէմքում . . .

V.

Անցաւ չորս տարի։ Գարունն այս անգամ վաղ էր եկել. գետերը մեծացել էին. գրեթէ ամեն օր անձրև էր գալիս։

Ընդարձակ լճի վրայ կակուղ սահում էր նաւակը։ Բարձրահասակ, թխադէմ, մեծ-մեծ սև աչքերով, բաց ու համարձակ նայւածքով մի աղջիկ ճարպկութեամբ թիավարում էր նաւակը։ Աջ և ձախ սահում էր եղեգների և ջրի ընթացքով լողացող գերանների միջով։

Լճի չորս կողմը բուսած էին հարիւրամեայ ծառերը. տեղը խուլ էր և վայրենի . . . Աղջիկը շատ արագ էր թիավարում, ինչպէս երևում էր շտապում էր. նաւակը ուղղեց նա դուրս ընկած հրւանդանի եռևը, կանգնեցրեց ափի մօտ, թիերը հաւաքեց և սկսեց սպասել։

Շուտով ծառերի միջից խշխշոց լսեց, կանաչ ճիւղերը բացւեցին և նրանց եռևից դուրս նայեց մի աղջիկ, կարճահասակ, նիհար ու դեղնած դէմքով։

—Գալիա, այստեղ ես, վախվախելով հարցրեց նա և ոտը դրաւ նաւակի մէջ։

—Բարև, Աննա . . . նրանք գրկեցին միմեանց։

Հ.Ս.Խ. Գիտութեանց Ակադեմիայի Գրադարան
Библиотека Академии Наук Армянской С.С.Р.
7/XI 1922
Ա. ՄՏԱՍԻՑԱՆԻ ԱՆՎԱՆ

—Այս ո՞րտեղ ես այսքան ժամանակ. ո՞ւրքան կարօտել եմ քեզ. հօրս յօնքերը կիտած է, անձրևն էլ մի կողմից ամբողջ օրը գալիս է, սիրտս տխրում է, ձեռս էլ բան չէ բռնում։ Այնքա՞ն ուրախացայ երբ քեզանից լուր ստացայ։ Գնանք մեր տուն։

—Ո՛չ, կաց, պէտք է քեզ հետ առանձին խօսեմ—ասաց Գալիան, — Գիտես ի՞նչ կայ, շուտով մեզ մօտ պէտք է կատարեն Աւսէն կուռքի տօնը. մի ասա՛ տեսնեմ, թէ ես ի՞նչպէս անեմ։ Ես ի՞նչպէս գնամ մերոնց հետ, ի՞նչպէս տօնեմ ու երկրպագեմ կուռքերին. մեղք չէ՞. . . Հը՞, խօսիր, Աննա, ի՞նչ ես լռել։

Աննան նստած էր գլուխը կախ։

—Ա՛խ, Գալիա ջան, չըգիտեմ ինչ ասեմ... հօրս հարցրու։

—Ո՛չ, դու ինքդ ինձ ասա, քեզանից եմ ուզում լսել։ Ախը չէ՞ որ ես այժմ քրիստոնեայ եմ ու մկրտուած. մեղք է չէ՞ կուռքերի առաջ պար գալ, պսակներ հիւսել, խունկ ծխել ու երգ երգել։ Ոչ, ոչ, սպասիր, դու ոչինչ մի ասիր, դու ինչո՞ւ պէտք է ասես. այդ ես ինքս գիտեմ, գիտեմ որ մեղք է, լսում ես, Աննա ջան. ոչ, ոչ, ոչ, էլ չեմ անի այս անգամ, ամենևին չեմ համաձայնի, թէկուզ ինձ սպանեն, թէկուզ այրեն, կրակ տան. պէտք է ասեմ հօրս, էլ չեմ կարող, ոյժ չունեմ ծածկելու, չեմ կարող . . . ու Գալիան հեկեկաց։

Աննան վախեցած գրկեց Գալիային։

—Բաւական է, աղաւնեակս, վախենում եմ ես. բաւական է, հանգստացիր. աղօթիր, կանցնի։ Ես գիտեմ, որ մեղք է, բայց, ո՜հ, սարսափում եմ. լաւ, դու ի՞նչպէս կարող ես ասել հօրը։

—Ի՞նչ հարկէ կասեմ. ի՞նչ կայ։ Աւելի լաւ է ասել, քան լռել ու ծածկել։ Աննա, հոգեակս, գրկիր ինձ, պինդ, պինդ, այ այդպէս. համբուրուենք ես ու դու, ամուր. թող լինի, ինչ որ լինելու է, գուցէ մենք վերջին անգամ ենք տեսնուում։

—Ո՜հ, Գալիա, սարսափելի է, եկ աղօթենք միասին։

Աղջիկները դուրս եկան տիր, ծունկ չոքեցին ու երկար ջերմ աղօթում էին, յետոյ կրկին գրկեցին միմեանց ու բաժանուեցան։ Թփերի միջից մի խշխշոց լսուեց, Նրանք երկուսն էլ վեր թռան, ականջ դրին, բայց այլևս ձայն չըկար . . .

—Երևի քամին է կամ առնէտ է, կամաց խօսեց Գալիան և վազեց դէպի նաւակը։

Գալիայի նաւակը հանգարտ սահում էր լճի վրայ. և նրա գլխում գասթնել էին հին յիշողութիւնները.—ահա արդէն երեք տարի է, որ ինքը քրիստոնեայ է, մտածում էր ինքն իրան, շատ, շատ բաներ է սովորել այդ աղքատիկ խրճթի մէջ, այդ անտառի մէջ. վառ սիրով սիրել է աշխարհի Փրկիչ Քրիստոսին, ամբողջ սրտով նուիրուած է Նրա աւետարանին. ջերմ կապուած է նա ծերունի Անդրէի ու Աննայի հետ.—սրանք բացին իր առաջ ճշմարտութեան, բարոյ և հաւատի լոյսը . . . „Իսկ հա՞յրս“, անցաւ նրա մտքով։—Ոչ, ինքը հօրն էլ է սիրում, բայց այս ուրիշ բան է, ինչ էլ լինի իր նոր հաւատը չի փոխիլ հօրը՝ սիրոյ հետ. աւելի լաւ է մեռնել, քան փոխել։

VI.

Երեկոյեան Բոսլաւը գնաց Գալիայի ննջարանը։ Գալիան նստած ասղնեգործում էր։

—Թող այդ, Գալիա, գնա վանառանոց, ընտրիր յոյնի մօտ ամենաիայլուն գոյնի կտոր քեզ համար,—ես ուզում եմ որ իմ աղջիկս ամենից գեղեցիկ լինի երգիչների խմբի մէջ։

—Ինձ նոր հագուստ չէ հարկաւոր, հայրիկ, կամաց ասաց Գալիան. ես չեմ գնալու, չեմ երգելու խմբի մէջ։

—Այդ ինչ է։ Ի՞նչպէս թէ խմբի մէջ երգելու չես գնալ. նոր զգեստ էլ չէ հարկաւոր։ Հիւանդ հո չէ՞ս, զաւակս։ Բոսլաւը աղջկայ ծնօտից քնքշութեամբ բռնեց, բարձրացրեց նրա երեսը դէպի վեր և շփոթած սկսեց նայել նրա աչքերին։

—Ոչ, հայրիկ, ես առողջ եմ . . .

—Ուրեմն էլ ինչ է պատահել քեզ, ինչու այդպէս տխուր ես։ Գալիա ջան, հոգեակս, ասա, մի ծածկիր։ Կարելի է քեզ վշտացրել են. ո՞վ է քո քէֆին դիպել։

Գալիան լռեց, յետոյ արագ դէն ձգեց ձեռքի կարն ու հեկեկալով ընկաւ հօր գիրկը։

—Հայրիկ, հայրիկ, չեմ թագցնի, կասեմ. հոգիս մաշւել է, էլ չեմ կարող . . .

—Ասա, ասա, աղաւնեակս, ասա, ցաւդ ինչ է։

—Ցաւ չունիմ, հայրիկ, բայց շատ ծանր է ինձ համար քեզանից թագցնել . . . Հայրիկ, թանգագին հայրիկ, մի բարկանար ինձ վրայ, ես չեմ կարող երկրպագել քո կուռքերին—ես քրիստոնեայ եմ . . .

Եթէ այդ բոպէին Գալիայի գլխին քարեր թափուէին և նրան ջարդէին Բոսլաւի աչքի առաջ, այնքան չէր սարսափի նա, որքան սարսափեց Գալիայի խօսքերից . . .

—Հայրիկ, հայրիկ, էլ ինչո՞ւ ես լռել. գոնէ մի խօսք ասա ինձ. ասա, որ սիրում ես ինձ,—ասում էր Գալիան վիրձելով գրկել հօրը, բայց հայրը բռնեց Գալիային և դէն ձգեց։

—Կորիր, հեռու լինձանից։ Ընդհամարձակւես մինչև անգամ մտածել ուրիշ աստուածների մասին, բացի նրանցից, որոնց երկրպագել են քո հայրերդ ու պապերդ։ Կրփակեմ քեզ սենեակում, քաղցած կրմեռցնեմ, կրտանջեմ քեզ. ես չեմ թոյլ տալ որ ինձ վրայ ծիծաղեն։ Այս ասելով նա ծանր քայլերով դուրս եկաւ ննջարանից։

Գալիան ամբողջ օրը աղօթում էր, լաց էր լինում, կոտրտում էր ձեռները. բայց երեկոյեան դէմ նա հանգստացաւ. մի բան վճռեց մտքում ու պառկեց քնելու։

Օքսանան ինչպէս մի ստուեր պտտում էր Գալիայի չորս կողմը, գլուխը շարժում էր, թիւխմներ էր ասում քթի տակ, օրհնած ջուր էր սրսկում, մահճակալի տակ զանազան խոտերով լիքը գաւաթ էր գնում. նա երբեմն երբեմն նայում էր Գալիայի անկողնին, բայց Գալիան պառկած էր անշարժ, աչքերը փակ—քնած էր։

Ցանկարծ դուռը ճռռաց, Բոսլաւը հանդարտ, ոտերի ծայրին մանգալով մտաւ ննջարանը և մօտեցաւ անկողնին։ Գալիան քնած էր երևում։ Հայրը կռացաւ դէպի նրան և սկսեց երկար նայել աղջկայ երեսին։

Օքսանան ոտերի ծայրով մօտեցաւ նրան և ասաց կիսաձան-

—Իմ Լշխան, հրաման տուր մի խօսք ասեմ, յետոյ ուզում ես գլուխս կտրիր . . .

—Ասա, պառաւ։

—Ես խմացել եմ թէ ո՞վ է մեր աղաւնեակին ճանապարհից հանել . . .

Բօսլաւը ձեռքով բռնել էր դաշոյնի կոթը և անգիտակցաբար սեղմում էր։

Գալիան տեղնուտեղը սառեց. նա քնած չէր և լսում էր ամեն բան։

—Խօսիր, շուտով, խօսիր . . .

—Այս առաւօտ . . . մեծ անտառում... մեր Գալիան . . . տեսնուեց մի աղջկայ հետ, որ անտառումն է կենում . . . այնտեղ մի ծերունի ևս կայ . . . խօսք են կապել որ սա չըգնայ խմբի մէջ երգելու . . . ես թագնուել էի. ծերունու. . . հետքը պահեցի ու հիմի տեղը գիտեմ։

Բօսլաւը լռեց։ Գալիան լսում էր հօր ծանր շնչառութիւնը։

„Փոթորիկ է լինելու“, մտածեց նա։

—Դէ լաւ, պառաւ, ասաց Բօսլաւը, պառկիր, քնիր ու լուռ կաց, թէ չէ . . .

—Այս րոպէիս գան ինձ մօտ Լիւտ ու Նըրօկ . . . Լուսաբացին ճանապարհ պէտք է ընկնենք, բարձրաձայն հրամայեց նա սանդուխքների վրայ սպասող ծառային։

Գալիան դողաց։ Լիւտ և Նըրօկ իր հօր բազէակիրներն էին և գազանի նման կոստաղի . . . Ախ, ինչ է ուզում անել, մտածում էր Գալիան և սպասում էր որ Օքսանան քնի։ Օքսանան էլ թարսի պէս չէր քնում, այս կողքից այն կողքն էր շուռ գալիս, տնքտնքում էր, վեր էր կենում, մօտենում էր

ծածկելու Գալիային, որ շարունակ դողում էր։ Վերջապէս խըռըմփոցը ձգեց։

—Այժմ ժամանակն է, ասաց ինքն իրան աղջիկն ու տեղից վեր կացաւ։ Միտքը շլոթուում էր։

—Լուսաբացին . . . Ի՞նչ անեմ, ինչպէս անեմ։ Դուրսը թաց է, անձրև ու քամի... Բայց հարկաւոր է, պէտք է . . . Ողջումաքիրս, ծերունի պապիս, դուք՝ իմ հարազատները, իմ սիրելիները, եթէ իմանայիք թէ ինչ վտանգ է սպառնում ձեզ... Տէր Աստուած, սիրտ տուր ինձ, ոյժ տուր ինձ ազատել նրանց, Դու հօ ամեն բան կարող ես անել։

Նա շուտով հագնուեց, ինչպէս ստուերը ծածուկ դուրս եկաւ տան ետևի դաւիթը. շներն ուզում էին հաչել, բայց ճանաչելով Գալիային, մրմռալով յետ գնացին։ Քամի էր, մանը անձրևը մաղմզում էր, նրա ոտերը ցեխի մէջ կորչում էին . . .

Ետևի պատշգամբի տակ երեք թամքած ձի կանգնած էին. ձիապանը երևի գոմն էր գնացել։

—Ա՛յ, ինչ լաւ կըլինի, եթէ ձիով գնամ,—մտածեց Գալիան — կարելի է մինչև լճի մօտ քշել, իսկ այնտեղից նաւակով... Բայց այստեղ գլխի կընկնին . . . Է՜հ, մի և նոյն է, շատ հարկաւոր է թէ կիմանան, ինչ ուզում է թող լինի . . .

Ձիու սանձը արագութեամբ ձգեց, դարձրեց ձին դէպի ցանկապատը, քաջ տղամարդի պէս ցատկեց թամքի մէջ տեղը, ասպանդակները խփեց ձիու կողքին և ինչպէս նետ սլացաւ դէպի դաշտ . . . Ձիու սմբակները միակերպ չըմփում էին կակուղ ցեխի մէջ. մթութեան մէջ նշմարւում էին ծանօթ տնակները, խրճիթներն ու ճանապարհը։

VII.

Երբ Գալիան հասաւ խրճթին, ծերունին ու աղջիկը դեռ քնած էին։

—Գալիա, հոգեակս, այս ժամանակ . . . բացականչեց Աննան,—այդ ինչ է քո երեսիդ հալը. ինչ է պատահել . . .

—Փախէք, փախէք շուտով, խեղդուելով ասաց Գալիան. ազատուեցէք, հայրս իր մարդկանցով գալիս է այստեղ, իմ դայեակս ձեր հետքը պահել է։ Շո՛ւտ, շուտ... և նա Թուլացած ընկաւ Թախտի վրայ։

—Ապա դո՞ւ ինչ ես անելու, տարակուսած հարցրեց Աննան. նա իսկոյն հասկացել էր ամեն բան և նրա սիրտը ցաւից ճրնշուում էր։

—Մի մտածիր, ինձ համար դու մի մտածիր, քոյրս, սիրելիս, դու հայր ունիս, նրան պահպանիր. փախէք, քանի ժամանակ կայ . . .

—Դու էլ փախիր մեզ հետ . . .

—Ո՛չ, Բոսլաւի աղջիկը չի փախչիլ իր հօր բարկութիւնից, աւելի լաւ է մեռնել . . .

Աղջիկը ուղղուեց, նրա շրթունքները սեղմուում էին ու աչքերը կրակի պէս փայլում։

Մի քանի րոպէից յետոյ հայր ու աղջիկ պատրաստուեցին փախչելու, ծերունին օգնեց Գալիային, Աննան կախուել էր նրա վզից ու չէր կարողանում բաժանուել։

Գալիան նրան շտապեցնում էր.

—Աննա, հոգեակս, սիրելիս, եթէ ինձ սիրում ես, շո՛ւտ արա, ինձ մի տանջիր . . . Նա իր ձեռքով նրան հեռացրեց

իրանից ու կիսամեռ դրութեան մէջ յանձնեց հօրը, երկուսը միասին աներևութացան անտառի խորքում։ Գալիան երեսը խաչակնքեց ու ազատ շունչ քաշեց։

—Իսկ ես—ակամայ մտածեց նա—էլ կըտեսնե՞մ նրանց... Ո՛չ, իմ օրերս համարուած են, բայց կարելի է և բոպէներս...

Գալիան նստեց Թախտի վրայ, կռթնեց ձեռքերին ու սպասեց։ Երկու ժամ անցաւ։ Հեռուից լսեց ոտնաձայն, որ քանի գնաց այնքան մօտեցաւ, վերջապէս լսեց աղմուկ...

—Գալիս են,—մտածեց Գալիան ու Թախտից իջաւ։ Դուռը ծեծեցին. լսեց Բոսլաւի հզօր ձայնը.

—Է՛յ, դուռը բացէք։

Ներս մտաւ Բոսլաւը, նրա ետևից Լիտա և Նբրօկ, յետոյ Օքսանան։ Ամենքը մնացին քար կտրած։

—Գալիա, աղջիկս, այս ինչ է նշանակում,—որոտաց Բոսլաւը և նրա յօնքերը կիտուեցին։

—Մի բարկանար, հայր, հաստատ և պարզ խօսեց աղջիկը,—ասա, ինչ ուզում ես. ես միայն ազատել եմ իմ բարեկամներիս և դուք էլ նրանց ետևից չէք հասնիլ . . . Ուզում ես իմ գլուխս կտրել տուր, ուզում ես տանջիր, միայն իմացիր,—ես հոգւով ու իմ բոլոր մտածմունքներով քրիստոնեայ եմ. դու իմ հոգու տէրը չես, թէև իմ հայրս ես . . .

—Շնորհակալ եմ, աղջիկս, լաւ ծիծաղեցիր դու քո հօր ու պապերիդ հաւատի վրայ. . . առանց իմ կամքը հարցնելու, դու փախար տնից, որ իմ թշնամիներիս ազատես.—վա՜հ, այս ինչ բան է. սրանից աւելի ինչ խայտառակութիւն կըլինի իմ սպիտակ մազերիս համար։ Էլ այսուհետև դու իմ աղջիկը չես. էլ չեմ ուզում քո ամօթահար երեսը տեսնել։ Պատրաստիր

գլխատելու, իսկ առայժմ կըմնամ քեզ ապարանքում, էլ չենք տեսնվիլ քեզ հետ։

Սարսռեց Գալիան, աչքերը մթնեց, Օքսանան ճչաց, գըբկեց իր աննման սանիկին և բազմակիրների հետ դուրս տարաւ նրան խրճթից։

VIII.

Դառն արտասուքով ողողում էր Օքսանան իր անկողինը։

Գալիան նայեց, նայեց և խղճաց իր դայեակին։

—Բաւական է, մայրիկ, լաց մի լինիր, մինչևնոյն է. եթէ դու հօրս չասէիր, ուրիշներն էին ասելու, ես դարձեալ չըպիտի կարողանայի նրա բարկութիւնից ազատուել։

—Իմ աչքի լոյս, չեմ իմացել, չեմ հասկացել. հէնց կարծեցի, թէ քեզ համար լաւ բան եմ անում. խելքս չըկտրեց թէ քո հայրդ, այդ կատաղի գազանը իր հարազատ որդուն չի խնայի . . .

—Լսիր մայրիկ, շոյեց նրան Գալիան, ես երկար չեմ ապրելու։ Աւելի՞ն տօնին երկու օր է մնացել, գիտեմ, որ լինձ նրան կըզոհեն... կարելի է դեռ աւելի շուտ . . . վերջին անգամ լինձ ուրախացրու, ինչ որ խնդրեմ, կատարիր . . .

—Ասա, հոգեակս, ամեն բան կանեմ քեզ համար . .

—Իմացիր, տես նրանց ի՞նչ է պատահել. արդեօք կարողացա՞ն թագնուել, թէ չէ. կենդանի՞ են, թէ չէ. հասցրու նրանց իմ վերջին խաբարս։

—Այն բարբարոսնե՞րը, այն կախարդնե՞րը, այն՝ որ քեզ

կախարդեցին ու կորցրին իմ աննման երեխայիս։ Թող վերթեն նրանց ոսկորները, գրողը տանի նրանց։

—Բաւական է, մայրիկ, նրանք բարբարոսներ չեն, ոչ էլ կախարդներ. նրանք բարի մարդիկ են. եթէ լինձ սիրում ես, նրանց մի անիծիր. մտածիր, որ ես քեզ հետ անց եմ կացնում իմ կեանքիս վերջին օրերը . . ։

—Թող քո ասածը լինի, հոգեակս, թէև նրանք լինձ համար ատելի են, բայց չեմ կարող ես քո խաթրդ կոտրել։ Կըգտնեմ նրանց—անպիտաններին, ամեն բան կիմանամ, ինչ որ դու ուզում ես իմանալ, քեզանից խաբար կըհասցնեմ այդ չարագործներին . . .

Գալիան կենդանացաւ և կարծես թէ ուրախացաւ։ Նա շուտով իր շապկից մի կտոր քաթան կտրեց, նրա վրայ մի քանի տող բան գրեց վայտի կտորով, որ նա թաթախում էր սրտակի միջի մութ հեղուկով։ Հազիւ արշալոյսը ցոլաց, Օքսանան արդէն կատուի պէս կուչ-կուչ անելով անտառի միջով գնում էր, նայում էր կածաններին, շուտ-շուտ յետ էր նայում. նա գիտէր արդէն, որ ամեն կողմ ձիաւորներ են ուղարկուած քրիստոնեաներին փնտրելու և դեռ նրանցից ոչ մինը չէր գտել նրանց հետքը։ Նա անցաւ բոլոր կածանները, կանգնեց թաւուտի մէջ, չորս կողմը նայեց, կարծես մի բան եկաւ խելքին, ծռուեց ուղիղ դէպի աջ և գրեթէ վազում էր մարգագետնի ճահճային հողաքէՀների ու առուակների վրայով . . .

—Ինչպէս խելքս չըկտրեց առաջուց, մրթմրթում էր նա ինքն իրան—պառաւել եմ, յիշողութիւնս էլ խանգարուել է։

Խիտ անտառում, ճահիճների միջ ամին բարձրանում էին մի շարք ցած տխրատեսիլ բլուրներ. մի կողմից դրանք

ելնում էին դէպի հովիտը թեք լանջերով, միւս կողմից դեպ կտրուած քով կախուում էին անդունդի վրայ, որի մէջ վշվշում էր սրընթաց, կապտագոյն առուակը։ Այդտեղ Դիտի անց քն էր, կախարդական աշխարհ, որտեղ—ինչպէս հաւատում էր ժողովուրդը—ապրում էին հիւրիներ և մարդագայլեր։ Դիդի անցքի հէնց մէջտեղը երևում էր մի նեղ գառիվայր ճանապարհ։ Օքսանան համարձակ սողաց այդ անցքով, բռնելով ծառերի ճիւղերից ու բներից։ Ներքևում նա լուռ դիտեց չորս կողմը, խոնաւ կաւի վրայ ոտքի հետքեր նկատեց. կռացաւ, մի րոպէ լուռ դիտեց հետքերը և արագ գնաց դէպի այն կողմը։ Կէս ժամից յետոյ նա արդէն կանգնած էր ցածլիկ քարայրի առաջ, որ աւելի նմանում էր կախուած քարաժայռի մէջ քանդած փոսի։ Մուտքը ճարտարութիւնով ծածկուած էր վերևից կախուած թփով և մամուռով, բայց Օքսանայի սուր աչքերից չըթաղնուեց և նա սողալով ներս մտաւ այդ նեղ ծակը։ Փոքրիկ, կէս խաւար խուցի մէջ կանթեղի թոյլ լոյսի առաջ նստած էին Անդրէն ու Աննան։

Անդրէն կռացած էր գրքի վրայ, իսկ Աննան կռթնել էր արմունկի վրայ ու մտածմունքի մէջ ընկած նայում էր առկայծող լոյսին։

Օքսանային նկատելով նրանք երկուսն էլ վեր թռան։

—Մի վախենաք, ասաց նա, թէև դուք մեզ թշնամի էք, բայց ես վրէժխնդրութիւնով չեմ եկել ձեզ մօտ. ինձ ուղարկել է իմ Դալիան, իմ թշուառ երեխաս։ Ահա այս էլ ձեզ նամակ նրանից։

Աննան շտապով խլեց քաղաքի կտորը, աչքի անցրեց նրան և բացականչեց.

—Հայրիկ, հայրիկ, իմ Դալիային ուզում են գլխատել. . .

—Անդրէն սարսեց։ Ինչպէս կայծակ անցաւ նրա գլխից այն միտքը, թէ ինքն է մեղաւոր Դալիայի մահուան մէջ, որ չըկարողացաւ նրան պահպանել, ինքը վախաւ վտանգից՝ միայն իրան համար մտածելով . . .

Տեղից վեր կացաւ, բայց կրկին պինդ վայր ընկաւ փայտի կոճղի վրայ, որի վրայ նստած էր։

Հարց ու փորձ արին Օքսանային. նա էլ անմիջապէս արտասուքներով պատմեց ամէն բան։ Աննան էլ աւելի սպրդտնեց, նրա աչքերը մի տեսակ մեծ մեծ բացուեցին, կարծես թէ նա իր աչքերի առաջ մի սարսափելի բան էր տեսնում . . .

—Հայր, ես չեմ կարող նրան այդպէս թողնել—ասաց նա կամաց, բայց հաստատ,—օրհնիր ինձ, հայր, ես կըգնամ նրա մօտ, կըմեռնեմ նրա հետ . . .

Անդրէն լռեց, յետոյ բերանը բաց անելով կարծես մի բան էր ուզում ասել. բայց ինչ որ նա զգում էր, խօսքերով չէր կարելի ասել. նա լուռ ծունկ չոքելով սկսեց ջերմ աղօթել։

Օքսանան այդ րոպէին մոռացաւ, որ իր առջև քրիստոնեաներ էին, որոնց նա մի քանի ժամ առաջ անիծում էր. նա մի բան էր տեսնում՝ որ այդ գունատած աղջիկը ուզում էր գնալ սարսափելի, անխուսափելի մահուան առաջ։ Խեղճը եկաւ։

—Դադարիր, աղջիկ, ասում էր նա Աննային։ Ինչո՞ւ ես գնում մահուան դէմ. քեզ հայր ունիս, ինչպէս կըթողնես նրան։

Աննան հառաչեց.

—Թող ինձ գլխատեն Դալիայի հետ միասին. մեր հաւատը մեզ սովորեցնում է չըվախենալ մահից. իսկ եթէ Դալիան ինձ հետ միասին լինի, նրա ցաւը կըթեթևանայ։

Օքսանան Նրան լսում էր և հիանում։

—Ծերունի, ասաց նա Անդրէին, մի՞թէ դու այս թշուառին կը թողնես որ գնայ մահուան հանդէպ։

—Այո՛, կը թողնեմ, թող անէ այնպէս, ինչպէս իրան սիրտը իրան ասում է. մենք մեղաւոր ենք որ չըպաշտպանեցինք Գալիային. մենք վախանք, խնայեցինք մեզ, իսկ Նրա մասին՝ մեր հոգեակի մասին չըմտածեցինք . . . Գնա՛, աղջիկս, թող Աստուած քեզ օրհնէ. գնա Նրան քաջալերիր վշտի ժամանակ ու մեռիր Ճշմարիտ հաւատի համար . . .

Նրա ձայնը դողաց, նա օրհնեց Աննային, և երկար, երկար Նրան պահեց իր գրկում։

—Ներիր, հայր, ասաց աղջիկը հանդարտ։

—Գնա, որդեակ, երևում է, որ Աստուած ուզում է մեզ փորձել, գնա և փառաւորիր Նրա անունը . . .

Օքսանան չըդիմացաւ, նա սաստիկ խղճաց այդ մարդկանց։

—Ի՞նչ էք անում, զժուի՛լ էք. այդ տեսնուած բան է։ Գիտի՞ս, ծերունի, լսիր, ախր Նրանք չեն խնայի աղջկանդ։ Երբ Գալիային չըգթացին, դրան կըսպանեն ու կըսպանեն, կայրեն, այնպէս որ դրա մի ոսկորը չի մնալ . . .

—Մեծ և հզօր է մեր Աստուածը։ Եթէ Նա չըկամենայ, դրա գլխից մի մազ էլ չի պակասիլ, իսկ եթէ դրան վիճակուած է մեռնել—սուրբ է Նրա կամքը։

Հայը ու աղջիկ կրկին փաթաթուեցան միմեանց, աղջիկը հօրը գլուխ տուեց մինչև գետին և դուրս եկաւ Օքսանայի ետևից . . .

IX.

Զընայելով որ դեռ վաղ առաւօտ էր, իշխանի ընդարձակ գաւթում ամենքը ոտի վրայ էին արդէն. հաստատոր բազէակները հրամաններ էր տալիս մանկլաւիկներին, ձիապանները ձիեր էին պատրաստում, խոհարարները թըխթըխկացնում էին խոհանոցում, լսւում էր ընտանի թռչունների ճչոցը, որոնց երևի մորթում էին, գաւթի միջից տանում էին ահագին սրբազան խոզը, որ սարսափելի կերպով ճղճղում էր. . .

Օքսանան և Աննան ներս մտան սայլադռնով։

—Այսօր շատ վաղ են վեր կացել ամենքն էլ, երևում է, որ մեր ծերունին որսի է գնալու, ասաց Օքսանան։ Աննան վախվխելով նայեց չորս կողմը, նա երբէք այդքան ժողովուրդ չէր տեսած . . .

Նրանց պատահեց մի ձիապան։

—Այդ ո՞ւր էք ուզում գնալ, հարցրեց Օքսանան նրա կողքից անցնելիս։

—Որսի, ծոյլ ծոյլ պատասխանեց նա,—հրամայուած է, որ գլխաւորներից յետոյ իսկոյն ամենքը հաւաքուած պատրաստ լինին։

Օքսանան կանգնեց կէս ճանապարհի վրայ և իսկոյն երեսը դարձրեց դէպի ձիապանը։

—Ի՞նչ գլխաւորներ, ի՞նչ ես ասում։

—Ո՞նց թէ ինչ, չի՞ս իմանում ինչ է. այսօր քո իշխանուհի օրիորդին տարան . . . մի ժամ կըլինի որ գնացել են։

Երկու կանայքն էլ ճչացին.

—Ո՞ր կողմը գնացին, ո՞ր տեղ է գլխատուԹիւնը շտապով, հարցնում էր Օքսանան գնալով։

—ԼՀի ափին, Պերուն կաղնու տակ . . .

Օքսանան և Աննան վազելով դուրս եկան։ Զիսպանը նայեց նրանց ետևից, ծոյլ ծոյլ յօրանջեց ու գնաց դէպի ձիերը։

—Վա՛յ, բալաս, վա՛յ իմ աննման երեխայ, շունչը կտրելով ասում էր Օքսանան.—կըսպանեն աղաւնեակիս. ես էլ չեմ տեսնի նրա պայծառ աչքերը, էլ չեմ լսի նրա զիլ ձայնը . . . Ա՛խ, սիրտս գնում է . . .

Աննան վազում էր նրա ետևից ու երեսը խաչակնքելով աղօԹք էր մրմնջում։ Մեծ լՀի ափին, այն լՀի, որի մօտ մի քանի օր առաջ տեսնում էին երկու բարեկամուհիները, բազմաՀիւղ, հարիւրամեայ կաղնու տակ պատրաստած էր գլխատուԹեան տեղը։ Ժողովուրդը քանի գնում աւելանում էր։ Հրապարակի վրայ, Ճիշտ կաղնու տակ կանգնեցրած էր մի մեծ կոՀղ և նրա վրայ դրած էր մի նոր փայտուն կացին։

—Բերում են, բերում են, լսեց ամբոխի մէջ։

Հեռուից լսեց երգի ձայն և ձիերի ոտերի դոփիւն։ Ամենքի առջևից ձիով գալիս էր Իշխանը, ոտից մինչև գլուխ սպիտակ շորում, սպիտակ արծաԹազարդ ձիու վրայ. նրա ետևից, պատգարակի վրայ բերում էին Գալիային։

Գալիան նստած էր տխուր, գլուխը կախած, սպիտակ, հարԹ շապիկը հագին։ Պալատական աղջիկները գնում էին լուռ, վախեցած, տխուր յուսահատ երգը չէր յաջողւում. ձայները շուտ շուտ ընդհատւում էին հեկեկանքներով.—Գալիային ամենքը սիրում էին, նա ամենքի սիրտը գրաւել էր։

Բսլաւը սպառնալից դէմք էր ստացել, նա կիտել էր

յոնքերը. երբ նա որոտալից ձայնով գոռաց. «Ճանապարհ բացէք», ամենքը սարսափեցին։ Ամբոխը յետ կացաւ։ Գալիային իջեցրին պատգարակից. նա կռԹնեց կաղնի ծառին։

—Ո՞վ մեծդ Պերուն, սկսեց Բսլաւը և նրա ուժեղ ձայնը որոտաց խիտ անտառի մէջ, մեծ Պերուն, քեզ եմ մատուցանում այս զոհը. սրբիր ինձ և իմ ընտանիքը, իմ ազգականներին և բարեկամներիս նախատինքից և անպատուԹիւնից, հայհոյանքից և ծիծաղից . . . Վքէժ և անէծք նրանց գլխին, ով որ խլեց ինձանից իմ աղջկան. Թող որոտան նրանց գլխին կայծակ և շանԹ, Թող չբկարողանան նրանք ազատուել քո բարկուԹիւնից . . .

—Աղջիկս—դարձաւ Բսլաւը Գալիային—հրաժարուիր քո անմտուԹիւնից . . . նրա ձայնը դողաց.—յիշիր որ դու իմ միակ զաւակս ես... Գալիա, մի՞Թէ այդքան քարացե՞լ է քո սիրտը...

—Հայր, հայր, իմ Թանգագին հայր, չէ՞ որ ես քեզ սիրում եմ։

Հայրը ձեռքերով հեռացրեց նրան իրանից։

—Ուրեմն հրաժարուիր մոլորուԹիւնից, մոռացիր նրանց, եղիր իմ դաւակս։

—Ո՛չ, հայր, չեմ կարող. ով որ մի անգամ ճանաչել է լոյսը, մի՞Թէ կարող է ուրանալ նրան, ասաց տխուր օրիորդը։

Բսլաւը գլուխը բարձրացրեց, նրա աչքերը փայլեցին, նա նշան տուաւ ծառաներին։ Գալիայի ձեռքերից բռնեցին, Բսլաւը վերցրեց կացինն ու յետ ծալեց իր լայն զգեստի թևերը...

Զորս կողմը տիրեց մեռելային լռուԹիւն . . . Ցանկարծ օդի մէջ լսեց յուսահատ աղաղակ և երկու կանայք շնչա-

սպառ, գլուխները կորցրած պատռեցին ամբոխը և հասան գլխատման տեղը . . . Ամբոխը շչուկ հանեց։ Բոսլաւը կանգառաւ, Օքսանան և Աննան վազեցին Գալիայի մօտ. ծառաները ակամայ յետ քաշուեցին։

—Գալիա, հոգիս, դու ողջ ես, ուրախ ուրախ մրմնջաց Աննան։ Բոսլաւը դիմեց դայեակին խստութեամբ.

—Օքսանա, այդ ինչ է քո արածդ։ Աննան թողեց Գալիային և իր մեծ մեծ կապոյտ աչքերը ձգեց Իշխանի աչքերին. նա գլուխը բարձրացրեց, աներկիւղ նայուածքով դիտեց ամբոխը, մօտեցաւ Իշխանին ու հաստատ ձայնով ասաց.

—Իշխան, ես եմ այն քրիստոնեայ աղջիկը, որ Գալիային դարձրի մեր հաւատին։ Եթէ ձեր օրէնքով Գալիան արժանի է գլխատութեան, այն ժամանակ բոլոր մեղն իմս է . . . Ինձ գլխատիր, եթէ դու այդպէս ծարաւի ես քրիստոնէի արեան, բայց նրան մի կորցնիր. . . Տեսնում ես, Իշխան,—ազաչում էր նա ծունկ չոքած,—ես ինքս եմ եկել քեզ մօտ, ես չեմ վախենում մահուանից, քեզանից միայն մի գթութիւն եմ խնդրում, մի սպանիր քո դուստրը։

Աննայի խաղաղ ու քնքուշ ձայնը, նրա գունաթափ կէսմանկական երեսը, նրա մեծ մեծ կապոյտ աչերը այնպէս ազդեցին Բոսլաւի վրայ, որ նա ակամայ գլուխը խոնարհեց։ Մի ինչ որ հեռաւոր անցեալ եկաւ նրա աչքի առաջ. այդ սպասող մանուկի ձայնից, Բոսլաւը չէր հասկանում, թէ արդեօք այդ իրան խաղաղ մանկական օրերն են, սիրող մօր գգւանքն է, թէ վաղուց մեռած սիրելի կնոջ ձայնն է . . . Հալւեց նրա սիրտը, գլուխը խոնարհուեց հզօր կուրծքի վրայ, ձեռքը ցնցուեց, կացինը վայր ընկաւ։

Գալիան այդ բոպէին խելքը գլուխը ժողովեց, նա իր մեծ մեծ սև աչքերը զարմացած ու սարսափած չռեել էր Աննայի վրայ։

—Աննա, ինչո՞ւ ես դու քեզ կորցնում, ինչ կասի հայրդ։

—Հայրս ինձ օրհնել է, Գալիա, նա գիտէ որ ես եկել եմ մեռնելու մեր հաւատի համար, ճշմարիտ Աստուծոյ փառքի համար։

Բոսլաւը երեսը շրջեց։ Նա մտածում էր ինքն իրան. „Այնտեղ, հեռու անտառում, մի հայր օրհնում է իր աղջկան և օգարկում մահուան հանդէպ և ահա նա ինքը եկել է և խնդրում է որ իրան գլխատեն, ներեն Գալիային, ինքն ուզում է մեռնել իր հաւատի համար . . . Իսկ ի՞նչ . . . ոչ, իմ ձեռս չի բարձրանալ իմ հարազատ աղջկայ վրայ։ Թող ինչ լինելու է, լինի“։

—Թաղ կորցնէքեր, գիմեց նա իր զինակիցներին, բարի մարդիկ, ինչ կասէք, ինչ խորհուրդ կըտաք։ Խելքս բան չի կտրում. ինչպէս երևում է ծերութիւնից միտքս թուլացել է։

—Ներիր դրանց,—գոռաց ամբոխը միաձայն։—Ներիր, Իշխան, մի գլխատիր։

Իշխանը մի քիչ մնաց մտածմունքի մէջ. ձեռքը թափ տուաւ ու ասաց.

—Թող ապրեն, և դէն շպրտեց կացինը, ցատկեց ձիու վրայ և սլացաւ անտառից դուրս . . . . . .
. . . . . .

Այն ժամանակից շատ տարի է անցել։

Թասլաւը և իր աղջիկը վաղուց արդէն հանգստացել էին հողի տակ. Լշլանի գերեզմանի վրայ բարձրացել էր Թումբ, իսկ Գալիայի վրայ կանգնած էր խաչ։ Ժողովրդի մէջ երկար ժամանակ մնաց բարի Լշլանուհու՝ Գալիայի յիշատակը, որ իր ամբողջ կեանքը նվիրել էր որբերի, Թոյլերի, աղքատների ու հաշմանդամների օգնելուն . . . Դեռ երկար, շատ երկար ժամանակ Թէ քրիստոնեայ, Թէ կռապաշտ, հարուստ Թէ աղքատ գնում էին այդ Լշլանական գերեզմանը համբուրելու, որ գտնւում էր խիտ անտառում, լճի ափին, բազմաճիւղ կաղնու տակ . . .

ՊԵՏԱԿԱՆ-Հ.
Հ. Հ.
ԳՐԱԴԱՐԱՆ

ՎԵՐՋ

35. Դաւիայ, թարգմ Ս. Հալոռմնան։ — 10
36. Աղա-Մահմէտ Շահը Շուշուռմ թարգ. Հ. Ա-ռաքելեան — — — — — 2
37. Ռաֆֆի մինը այսպէս մինը այնպէս— 1 —

Օրացոյցներ 1891 թուականի.

Ռ. Կ.
38. Ծոցի — — — — — — 5
39. Նոյնը ընտիր թղթի վրայ — — — 20
40. Գրպանի պատկերազարդ — — — 15
41, Նոյնը ընտիր թղթի վրայ — — — 50
42. Մեծադիր դատկերազարդ սեղանի միակ-տար շատ կարեւոր տեղեկութիւններով 30
43. Նոյնը ընտիր թղթի վրայ — — 1 —
44. Կանանց համար յատկապէս, կարեւոր յա-ղեղուածներով Կանանց Ընկ. Կանոնադրու-թիւններ եւ այլն — — — — 40
45. Նոյնը ընտիր թղթի վրայ — — 1 —
46. Պատի—հատուածական— — — — 50
47. Պատի—տարեկան օրացոյց
Բոլոր հրատարակութիւններից մի-մի օրինակ զնողը ճանապարհածախս չէ վճարում։

ՊԱՏԿԵՐՆԵՐ

48. Պարոյր Հայկազն եւ Մովսէս Խորենացի — 50
49. Ս. Սահակ եւ Մեսրոպ — — — 50
50. Զմեռ (օրիոգրաֆիա) — — — — 50
51. Մոգերի երկրպագութ.— — — 3 —
52. Արշալոյս — — — — — 3 —
53. Ցիսոռս խաչակիր — — — 3 —

„Աղբիւրի“ եւ „Տարազի“ բաժանորդները ճանապարհածախս չեն վճարում։

ԳԻՆԸ 10 Կ.

Դիմել՝ Тифлисъ. Контора Ред. "Агбюръ"

533

0004687

2013

ՀՀ Ազգային գրադարան

NL0004687